



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1796

~~1111~~

~~1260~~

~~1393~~

Տ. Գրայուհ Ա. Եղիշելի
Էնք

Ի. Շ. Հրանթիկ
Հ. Շ.
Արթիկ

ՃԱՐ
ՃԱՐ

ԲՆԻԿ ԵՒ ՀԱՄԱՐԻՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Ճ Ա. Ռ
Յ Ա Զ Ա Գ Մ


ԲՆԻԿ ԵՒ ՀԱՐԱՐԻՒ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս — Տպագր. Արամեան.

Չազմագերլար, Ակոբեսն Խան, Թիւ 12.

1796



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—
1873

Ա Ա Տ

Ա Ր Ա Ք Յ Յ

Մ Ա Կ Ա Յ Ա Վ Հ Ա Բ Ի Բ Ա

Ճ Ա Յ Ա Յ Ա Ր Ա Մ Շ Յ Յ Բ

— — —



Ա Ր Ե Ա Յ Ա Յ Ա Ր Ա Մ Շ Յ Յ Բ

Ճ Ա Յ Ա Յ Ա Ր Ա Մ Շ Յ Յ Բ

Ա յ ս դ ա ս տ ա ն ա կ ա ն պ ա մ ա լ ի ք ու մ ի

։ ա յ ժ ա լ ո ւ մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի
ն ե ր Ա ծ Ո ի թ ի ի ն ։ ա յ ժ ա լ ո ւ մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի
ո վ ա յ ա լ ո ւ մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի
ո վ ա յ ա լ ո ւ մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի
ո վ ա յ ա լ ո ւ մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի պ ա մ ա լ ի ք ու մ ի

Ա ւ ե տ ա ր ա ն չ ա կ ա ն ։ զ ո ր ծ ը ու ղ ղ ա լ ի ք ու մ ի մ ի մ ի ա յ ն
Ա ս տ ո ւ ծ ո յ Ե կ ե ղ ե ց ի ի ն ։ պ ա շ տ ո ն ն է ո չ ո ք կ ը տ ա ր ա
կ ո ւ ս ի ։ Ա ն ի կ ա ի ն ք բ ։ Ք ր ի ս տ ո ս յ ա ն ձ ն ե ց ի ր Ե կ ե
ղ ե ց ի ի ն ։ ո ւ Ե կ ե ղ ե ց ի ի ն պ ա ր տ ա զ ա ն ց կ ը զ ո ն ո ւ ի ի ր
Տ է ր ո չ ը ա ռ ջ և ե ր բ ո ր ե տ ։ կ ը մ ն ա յ ի ր պ ա ր տ ք ը կ ա ս
տ ա ր ե լ է ։ Ն ա պ ա ր տ ա ս ո ր չ է կ ե ն ա լ և ա յ լ ո ց թ ո յ լ
տ ո ւ ո ւ թ ե ա ն ը ս պ ա ս ե լ ։ Հ ր ա մ ա ն ը ի ր զ ե ր ա զ ո յ ն
Տ է ր ո չ մ է ն է ։ Մ ա տ ե ։ ի ը ։ Մ ա կ ա յ ն ի ր ա ց վ ի ճ ա կ է ն
ա ռ ի թ զ ո ն ե լ ո վ մ ե ր Հ ա յ Ա ւ ե տ ա ր ա ն չ ա կ ա ն Ե կ ե ղ ե ց
ե ա ց մ է չ ա յ ս բ ա ն ը բ ա զ ո ւ մ ժ ա մ ա ն ա կ է ի վ ե ր
խ ն դ ր ո յ մ ա ս ն ա ւ ո ր ն ի ւ թ ե ղ ա ծ է ։ Թ է Տ ա ճ կ ա ս տ ա
ն ո ւ մ է չ Ա ւ ե տ ա ր ա ն չ ա կ ա ն զ ո ր ծ ը ու ղ ղ ա լ ի ք ու մ ի ն ա խ
ն ա պ է ս ո ր ն է ա ն կ է ։ տ ե ղ ա զ ի և հ ա մ ա ր ի ւ ն Ե կ ե
ղ ե ց ե ա ն ց թ է օ ւ ա ր ա զ զ ի ա ռ ա ք ե լ ո ւ թ ե ա ն ց ։

Ա ս կ է ե ր ե ս ո ւ ն տ ա ր ի ա ռ ա ջ Տ ա ճ կ ա ս տ ա ն ո ւ մ է չ
Ա ւ ե տ ա ր ա ն չ ա կ ա ն կ ա զ մ ա կ ե ր պ ե ա լ մ ա ր մ ի ն մ ը չ կ ա ր ,
ո ւ ս տ ի ա յ ս խ ն դ ի ր ն ա լ չ կ ա ր և չ է ր կ ր ն ա ր ը լ լ ա լ ։
Մ ա կ ա յ ն ե ր բ ե ր կ ր ի ի ն ա մ է ն կ ո զ մ ե ր ը ա յ ս ք ա ն Ա ւ ե
տ ա ր ա ն չ ա կ ա ն ե կ ե ղ ե ց ի ր հ ա ս տ ա ս ո ւ ե ց ա ն ո ւ ա ն ո ն ց

մէջ օրինաւոր պաշտօնէութիւններ սահմանուեցան,
բնականապէս այս խնդիրը յառաջ եկաւ :

Հետեւեալ ատենախօսութիւնը այս խնդրոյն վը-
րայ կը ճառէ, զոր կարդաց Թոպէրթեան վարժա-
րանի դասասու Մեծ. Յակոբոս էֆէնտի ձէնիզ-
եան Մայիս 5/17րդ օրն Բերա Հայ Աւետարա-
նականաց դպրոցը հաւաքեալ խորհրդակցութեան
ժողովին առջեւ, որոյ յատուկ յանձնուած էր ան-
ցեալ Նոյեմբեր ամսոյն մէջ Մեծ. Ս. Միհնասեանի հրա-
ւիրանօքը հաւաքեալ ոչ պաշտօնական ժողովին :

Ներկայ ժողովականք՝ որք Էին այլ և այլ Եկե-
ղեցեաց կողմանէ եկած Հովհիւր և եղբայրք, մեծաւ
հաճութեամբ և հաւանութեան ցոյցերով լսեցին
Մեծ. ատենախօսին խնդրոյն նկատմամբ ըրած
գիտողութիւններն ու բացատրութիւններն, և ի
վերջոյ միւսնական հաւանութեամբ որդեգրեցին
իւր ճառը իրեւ ժողովին զաղափարը և որոշեցին
տպագրութեամբ ի լոյս ընծայել զայն Հայ Աւետա-
րանական Եկեղեցեաց համար :

1873. Մայիս 5/17 :

ՃԱՐ

Յ Ա Ղ Ա Գ Ս

Բ Ն Ի Կ Ե Կ Հ Ա Մ Ա Ր Ի Կ Ե

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Ն

— Շ Պ Ա Տ Խ Ա Վ Ա Շ Ա Շ Ա Վ Ա Շ Ա Վ Ա Շ —

Ճաճկաստանի Քարոզչութեան գործին՝ օգ-
նող Անգղիական ընկերութիւնը մօտերս ժողով
մը ունեցաւ, ուր Ներկայ ըլլալով նաև Շաֆ-
թըղպըրիի կոմոք՝ որ օտար քարոզչութեանց
մեծ նախանձախնդիրներէն մին է, գեղեցիկ
ճառ մը խօսեցաւ ժողովոյն օտար քարոզչու-
թեանց մեծ խնդրոյն վերայ: Իւր ճառէն պար-
բերութիւն մի հոս թարդմանաբար կ'դնեմք
իրը բնաբան համազգի գործակալութեանց վե-
րայ մերառաջադրած քանիմը համառօտխորհըր-
դածութեանց: Ամերիկացի Միսիոնարաց ակնար-
կելով՝ կըսէ, «Ճեսէք նոքա ինտոր հաստատուն
քայլեր կառնեն համազգի գործակալութիւն մը
հաստատելու սկզբունքը յառաջ տանելու, սկզբ-
բունք մը, որոյ վերայ պարտ է մեզ ընթանալ

բոլոր Միսիոնարական դաշտերու մէջ։ Տեղացիք ու Գոյն տեղացիք են ամենայարմար անձինք տարածելու Սուրբ Գիրքը իւրեանց ժողովրդեան մէջ, ուսուցանելու Աստուծոյ բանը, ճշմարտութեան համար գուռոբանալու որպէսզի նա մուտ գտնէ ընկերական եւ ընտանեկան կենաց այլևայլ խորչերուն մէջ։ Իմ մտացս առջեւ բոլոր Միսիոնարական գործողութեանց մէջ ամենէն երևելին համազգի գործակալութիւնն է։»

Եափթըզպըրիի կոմնը չէ միայն այն անձը որ վերոգրեալ գաղափարը կ'կրէ. բոլոր Քրիստոնեայ աշխարհին այն անձինքը որոնք բարձր գիրք մը ունին ազգերը աւետարանելու մեծ գործին մէջ, գրեթէ առանց բացառութեան նոյնին համամիտ են. Այժմ մեք քանի մը ձեռնարկութիւններ յառաջ պիտի բերենք ի հաստատութիւն համազգի գործակալութեան մեծ կարևորութեանը։

1. Ազգ այնութեանց զանազանութիւնները մեծ հարկ մը կ'գնեն համազգի գործակալութեանց։ Այն Արարիչը որ զանազանութիւնն սփռած է համայն բնութեան երեսը, որ տերեւ մը ըստեղծած չէ այլ տերեսի մը նման ամենայնիւ, նոյն մեծ Արարիչը նաև ազգերը ամենայնիւ իրարու նման ըրած չէ։ Թէպէտև մարդկու-

թիւնը միւնոյն է իւր էական և հիմնական յատկութեանց ձևերուն և վիճակին նկատմամբ։ Թեպէտև նոյն զգացմունք, կիրք, բաղձանք և ձգտութներ կելլեն այն մեծ օրտէն որ ամբողջ մարդկութեան սիրոն է, սակայն կան բազմաթիւ մասնաւոր յատկութիւնք, հակամիտութիւնք և ընդունակութիւնք մասնաւոր ազգաց վրայ որ զանոնք այնքան կ'զանազաննեն իրարմէ, որչափ որ իւրաքանչիւր անհատ իրարմէ կ'տարբերին։ Այս զանազանութիւնք նախախնամական իմաստուն անօրինութեամբ իրենց յատուկ վախճաններ ունին, և որով այնքան կարեւոր են, որքան որ միութիւնը կարևոր է։ Այսութիւնն ի Զանազանութեան, Տիեզերաց մեծ և սքանչելի օրինաց մին է, Արարիչը կարող է երկու իրարու ներհակ երեւցած կամ ծայր սեպուած սկզբունքներ առնել և զանոնք իրարու հետզմայլի ներդաշնակութեամբ յարմարել եւ համաձայնեցունել։ Այսպէս՝ յորժամ համայն Տիեզերք գաղափարի միութիւն մի կ'յայտնէ ամենայն կողմէ նաև յետին աստիճան զանազանութիւն մը կ'ներկայացունէ ի բերկրանս, ի գմայլուն և յօդուած բոլոր բանաւոր էակաց։ Թերեւս խորհուի թէ այս զանազանութիւնք՝ այսքան որոշ բնական երևաւթից մէջ, բարոյա-

կան և կրօնական իրաց մէջ տեղ չունին։ Բայց
թէ բարսյական եւ թէ կրօնական բաները թէ-
պէտ իրենց էական և կարևոր ճշմարտութիւն-
ները Աստուծմէ կառնեն, այլ կրօնի մէկ փոքր
մասը միշտ մարդուն կ'վերաբերի։ Երկրպագու-
թեան ձևերը, արտաքին արարողութիւնները
և մասնաւոր կանոնները և կերպերը միշտ
մարդուն վերապահուած են, բաց ասկից քանի
մը վարդապետութեանց բացատրութեան կեր-
պերը, ըստ մտաց կազմակերպութեան, կամ
կրօնի մէկ մասին միւս մասէն աւելի կարևո-
րութիւն տալը՝ ինչպէս որ անհատներու, նոյն-
պէս ալ ազդաց մէջ կ'տեսնուի, և մեղի կը
թուի թէ այս ալ նախախնամութեան յատուկ
տնօրինութեամբը մասնաւոր վախճանի մը հա-
մար է զոր հոս բացատրելու տեղը չէ։ Այս որ
եկեղեցական պատմութիւնը կուսանի անաշ-
ռաբար և յարդելով ուրիշ ազդաց և ուրիշ
երկրաց կրօնական դաշտավարները և խորհուրդ-
ները, որչափ որ կ'համաձայնին անոնք էակա-
նապէս ճշմարտութեան բանին հետ, լոյսի պէս
պիտի տեսնէ թէ այս զանազանութիւնը միշտ
եղած և հարկաւոր վախճաններու ալ ծառա-
յած է։ Տին Սթանի որ ժամանակիս երևելի և
իմաստուն եկեղեցական պատմիչ մ'է և այժմ

Օքսֆօրտի Համալսարանին մէջ եկեղեցական
Պատմութեան դասախոս, Արևելեան եկե-
ղեցեաց վրայ խօսած ճառերուն մէկուն մէջ
կըսէ, «Կարևոր է դժուել այն մասնաւոր յատ-
կութիւնները, որք աւելի կամ նուազ, բոլոր
Արևելեան եկեղեցեաց կ'վերաբերին և որք կը
բաժնեն զանոնք Քրիստոնէութեան այն մասէն
որուն կ'վերաբերինք մեք, և ընդհանուր ա-
նուամբ մը Արևմտեան եկեղեցի կ'կոչուինք։ Այս
տարբերութիւնները քննած ատենս իմ նպա-
տակս չէ այն մասնաւոր կէտերուն վրայ խօսիլ
որք Երկոտասասններորդ դարուն մէջ արդեամբ
բաժնեցին զՀռովմէական և զԲիւզանդեան ժո-
ղովուրդները։ Արևելքի և Արևմտեան մէջ ճշ-
մարիտ տարբերութիւններ կոյին իրենց բա-
ժանմանէն երկար ժամանակ յառաջ, և ամե-
նայն հաւանականութեամբ որ և է ձևական
միութենէ մը վերջն ալ պիտի մնան։ Բաժանու-
մը տարբերութեանց հետևանքն էր և ոչ թէ
պատճառը, այն աստուածաբանական պատճա-
ռանքները, զօրօրինակ կրկնակի բղխում, խմոր-
եալ կամ անխմոր հացի գործածութիւն, ևն.
ինքնին ծանր բաներ երևցան, որովհետև առա-
ւել ընդհանուր տարբերութիւններ կային . . .
Ներքին տարբերութիւնները թէ աստուածա-

բանական և թէ քաղաքական արտաքին երեւոյթներէն առաւել խորը պահուած էին : »

Տին Սթանիլի ասոնք ըսելէն վերջը յառաջ կանցնի ցոյց տալու այն մասնաւոր տարրերու թիւնները, որ միշտ Արևելցիք ունեցան : Այս տարբերութեանց գլաւորներէն մին կը սէպէ՝ Արեւելեան Եկեղեցւոյն տեսականի հակամէտ ինելը և Արևմտեան Եկեղեցւոյն դորձնականի հակամէտ լինելը : Արևմտեան Եկեղեցին, կըսէ, կ'ալանձայ կաթողիկէ (Բնդհանրական) անուամբ, իսկ Արևելքը «Օրթօտօքս» (Ուղղափառ) անուամբ : Տին Միլմէն՝ ուրիշ Եկեղեցական պատմիչ մը, կըսէ» Արևելք Հաւատմաքներ շինեց, իսկ Արևմուտքը կարդ կանոն հաստատեց, Արևելեան Ժողովի մը առաջին վճիռը Աստուածութեան ստորոտելիքները որոշելու համար էր, Հռովմայ Պապին առաջին վճիռը Եկեղեցականները ամուսնութենէ արդելու էր : Աստուածաբանութեան բոլոր առաջին հիմնագիրները Արևելցիք էին . . . : »

Եկեղեցական Պատմիչք ուրիշ շատ տարբերութիւններ ևս յառաջ կ'ըերեն զորս հոս չեմք կարող մի առ մի թուել բայց որք բաւ են համողելու զմարդ՝ թէ աղդայնութեան և երկրային տարբերութիւնները միշտ մէկ կամ ու-

բէշ կերպով՝ երևան ելած են կրօնական կամ եկեղեցական դրութեանց մէջ, և հնար չէ եղած խափանել այն մասնաւոր հակամիտութիւնք, առանց խափանելու աճումը և կեանքը : Ազգաց յատուկ եղած յանկութիւնները իրենց կեանքն են : Երբոր Ազգ մը կապրի, այն իրեն տրուած ձիրքերովը և կարողութիւններով կապրի, և իւր կենաց հետ ի միասին իւր սեփհական յատկութիւնքը ի յայտ կուգան, Ճիշդինչպէս որ անհատի մը մասնաւոր կրթութեամբը իւր յատուկ կարողութիւնները և բնութիւնները առաւել ճշդութեամբ երևան կելլեն : Ապրիլ զանաղանութիւն է, մահն է որ ամենայն ինչ մի կընէ : Այսպէս է մտաւորապէս և քաղաքականապէս, աղդ մը քաղաքական կեանք չունի՝ եթէ իւր յատուկ քաղաքականութիւնը չունի, և մտաւորական կեանք չունի եթէ իւր միտքը իւր յատուկ կերպովը գործելու սկսած չէ : Ճիշդ նմանօրինակ է նաև կրօնական կեանքը ազգաց մէջ : Յարեկարգութիւնք կրօնական յառաջադիմութիւններ են, և կամ երկարժամանակեայ թմրութենէ մը զարթնուլ : Յայտնի է թէ այս երկուքին մէջ ազգի կամ ժողովրդեան մը բնիկ կարողութիւնները իրենց կերպովը գործելու սկսելու են : Յառաջադիմութիւնը արդէն

գոց եղած տարերքներու ի յայտ դալն է կըսեն
փիլիսոփայք, և իրօք այսպէս է համայն տիե-
զերաց մէջ: Ծառոյ կամ ծաղկան մը սերմը
յառաջացեալ և երկնարերձ ծառոյ մը կամ
երփներանգ և գեղեցկահիւս ծաղկան մը բոլոր
տարերքը՝ իւր մէջ կը պարունակէ, Եւ հողը, օդը,
անձրւները, ցողերը և արեգական քաղցը ճա-
ռագայթները կօդնեն որ այն տարերքը դուրս
հանեն, այն տարերքը՝ որ հոն անոնց մէջ կայ,
և ոչ այլ ինչ. և այս վիճակին մէջն է որ ա-
նոնք յառաջացեալ կամ կատարելութեան մէջ
կ'սեպուին, երբէք չկայ այնքան ճարտարա-
րուեստ նկարիչ մը որ ծաղկի մը ուսուցանէ
իւր ձեւ, երբէք այնքան փորձ պարտիզան
մը չկայ որ իւր բոյսերուն կամ ծաղկանց ձեւ
ինքը տայ, իրաւցունէ անոր հողը կ'մշակէ կը
պարարտացունէ, արմատներուն ջուր և հող
կուտայ. բոլոր հարկ եղածը կընէ որ անոնք
խմեն երկնից ջուրերը և ծծեն արևին ճառա-
գայթները, աւելորդ մասերը կ'քեցէ, երբ ծռին՝
կուղղէ զանոնք փափկութեամբ, երբ շատ թոյլ
և տկար են՝ յենարան կուտայ անոնց որ յենուն,
այլ ասոնցմէ ոչ մէկը իբրւ տարերք բոյսին յա-
ռաջադիմութեան մէջ չեն մտներ, կայ ի ներ-
քուստ զօրութիւն Աստուծմէ հոն գրուած, որ

1260

կ'շնէ ծաղիկը և բոյսը ճիշդ այնպէս՝ որպէս
իւր Արարիչը սահմանեց որ ըլլայ, և մինչև որ
այն ներքին զօրութիւնը աղասարար չգործէ
և իւր բնութեան համեմատ չգործէ, հնար չէ
աճումն յառաջ բերել թէպէտ բովանդակ աշ-
խարհին պարտիղպանները, բուսաբանները և
տնկագէտները իմի վայր հաւաքին իրենց հետ
ունենալով հողը, օդը, հովերը, անձրւները,
ցողերը և արեւուն լցոր, Այսպէս է նաև տղի
մը կրթութիւնը, անհատ անձի մը յառաջադի-
մութիւնը, և ժողովրդեան մը զարդացումը:
Խրաքանչիւրը իրենց յատուկ և զանազանեալ
զօրութիւնները ունին, պարտ է զարթուցանել
այն կարողութիւնները ամեն միջոց ի կիր արկա-
նելով և այն զօրութիւնն է ու գոյն այն զօրու-
թիւնը որ իսկական յառաջադիմութիւն պիտի
բերէ ինչպէս ամէն բանի մէջ, նոյնպէս ալ կրօ-
նական բարեկարգութեանց մէջ: Թող մեր այս
խօսքերէն չհասկցուի թէ մենք օտար քարոզ-
չութեանց գէմ կ'խօսինք, ամենևին, ընդհա-
կառակն կընայ դիւրաւ մակարերուիլ ըսուած-
ներէն որ մենք մեծապէս կ'յարգեմք զանոնք
և կարեոր կսեպեմք բազում պարագայից տակ,
որովհետեւ Աստուծած այլւայլ միջոցներ կ'գոր-
ծածէ իւր դրած այն զօրութիւնները զար-

թուցանելու, և պարաք է մեզ զբուցել որ թէ
օտար և թէ տեղացի Քրիստոնէի մը կամ քարոզ-
չի մը զմայլելի բարբը, ճշմարտութեան քարո-
զութիւնը, և ամենայն կերպիւ իւր ունեցած
լոյսը հաղորդելը մեծ ազդեցութիւն ունեցած
է շատ սրտերու վրայ, և անոնց թմբրած բնու-
թիւնը արթննալով իրենց Աստուածը և փրկիչը
վնասուելու ելած են, և օտար շատ քարոզիչներ
երեւելի կերպիւ օգտակար եղած են ոչ թէ
միայն անհատներու այլ և բովանդակ աղդաց :
Այսու հանդերձ մեր գաղափարը այն է թէ
օտար քարոզչութիւնք լուսաւոր և վառ պահ-
ած կանդեղներու նման ըլլալու են մարած
կանդեղներուն լոյս տալու : Երբոր կանդեղ մը
մարած է, զայն կրկին լուսաւորելու համար
ուրիշ կանթեղ մը կամ լոյս մը հարկ է, սակայն
եթէ տեական և մնայուն կերպիւ լուսաւորել
կավենք, հարկ է որ կանթեղին մէջ իւզ դը-
նենք, պատրոյզը շտկենք և կանթեղի մը բոլոր
պէտք եղածը հոգանք՝ որպէսզի միւս լոյսէն
հաղորդուած լոյսը տեսողական ըլլայ և լոյս
տայ ամենուն :

Այս մասին ըստածները կ'բովանդակին սա
ճշմարտութեան մէջ, թէ Արարիչը իւրաքան-
չիւր աղդի յատուկ և զանազան կարողութիւն-

ներ տուած է, իւրաքանչիւրը իւր յատուկ ներ.
քին զօրութիւնը ունի, վասնորոյ հարկ է որ
աղդի մը կրօնական բարեկարգութեան մէջ
ոյն զօրութիւնները գործելու ելլեն :

1296

Այս ճշմարտութեան մէջ կերելի համաղդի
գործակալութեան մեծ կարեւորութիւնը. կերելի
նաև թէ ամենայնիւ համաձայն է նա՝ բոլոր բնա-
կան և բարոյական օրինաց : Արտաքին միջոցներ
և զօրութիւններ կինան մտնել այս գործին մէջ:
Բայց այսչափ միայն՝ որ այն ներքին զօրութիւ-
նը զարթուցանեն, բարոյական զօրութեամբ և
աղդեցութեամբ նոր բարոյական զօրութիւն մը
ի յայտ դայ, առանց որոյ երբէք հնար չէ ճշ-
մարիտ և իրական զարգացում և կեանք ձեռք
բերել : Այս անվիճելի ճշմարտութեան պատ-
ճառաւ է, որ ոչ ոք երբէք կարող է նախա-
պէս որոշել կամ գծել աղդի մը բարեկարգու-
թեան կերպը կամ նոյնին զարգացման աստի-
ճանները, խնդիրը այն չէ որ մասնաւոր կեր-
պել և ձեւը յօրինեմք, այլ խնդիրը այն է որ
ճշմարտութիւնը իւր բոլոր զօրութեամբ աղդի
մը ճրաց և սրբն նայի, տարինենավ թմբեալ
զօրութիւնը արթննայ, և թող այն զօրութիւնը
իւր կերպով իւր յատուկ ձեր առնէ, զար-
թուցեալ բնիկ զօրութիւնը որքան ալ փոքը

ըլլայ՝ թող ծաւալի, թող քաջալերուի, մինչեւ
որ բովանդակ ազգին մէջ ընդարձակի, ինչու
որ միայն այդ զօրութիւնն է հարազատ զօրու-
թիւնը, և մի միայն այդ զօրութիւնն է որ իւր
ճանապարհը կրնայ դանել բարոյական լայնա-
ծաւալ երկնից մէջ ինչպէս որ բնական երկնից
անհուն գունդերը անբաւութեան մէջ կ'դըտ-
նեն իրենց շաւիդը :

2. Համազգի գործակալութիւնը ուրիշնկատ-
մամբ մի ևս մեծ կարևորութիւն ունի : Հայրե-
նափառական եռանդները հսն կ'մտնեն իրը տա-
րերք զօրութեան և կը միանան ուրիշ զգացմանց և
ուրիշ զօրութեանց հետ այնպիսի ոյժ մը կազմե-
լու, որուն նմանը չենք կարծեր թէ ուրիշ կեր-
պիւ կրնայ գոյութեան գալ, հայրենասիրական
զգացմունքը թէ պէտև Աստուածաշտական
զգացմանց չափ բարձր չեն, այլ անոնց հետ
միասին ներդաշնակութեամբ կրնան գործել և
բազում անդամ կարող են արտաքոյ կարգի
ճիգեր ընել տալ մարդու մը՝ իւր հայրենեաց
և իւր ազգին սիրովը վառեալ : Անուրանալի է
որ Աստուած մեր մէջ մասնաւոր սէր և զգաց-
մունք գրեթ է մասնաւոր նպաստակաց համար :
Մօր մը խանդակաթ սէրը հարկ է, որ որդի մը
անհուն և մեծնայ ամենայն գժուարութեանց և

տաղնապներու մէջ, կրնան ամէն մարդիկ սի-
րել և փայփայելու գործել երախայ մը, բայց
միայն մայր մը կրնայ այնպիսի սիրով մը սիրել
որ դիւցաղնաբար մինչեւ անդամ անհնարին
սեպուած բաները հնարտուոր ընել և իւր կեան-
քը անդամ կ'դնէ անոր համար : Ծնողական
սէրը կ'տեսնենք որ մասնաւոր սէր մըն է Աս-
տուածմէ տրուած որուն տեղը ընդհանուր սէրը
կարող չէ բռնել : Հայրենասիրական սէրն ալ
այս տեսակ սէր մըն է : Ես կ'հաւտամ թէ Աս-
տուած զայն գրած է մարդոյս մէջ օգտակար
նպատակաւ մը, և պէտք չէ այս զօրութիւնը
անդործ թողուլ, այս մեղք է : Պէտք է որ տե-
ղացիք գործեն որպէս զի այս զօրութիւնն ալ
գործածուի, երբ Աստուածոյ համար կ'գործեմք,
արժան է որ մեր մեջ գտնուած համայն կարո-
ղութիւններով գործեմք, անոնցմէ մէկն ալ
անդործ մնալու չէ : Մենք կ'սիրեմք ընդհանուր
մարդկութիւնը և պարտ է մեղ սիրել, նոյնպէս
որ և է անձ մը ընդհանուր մարդկութեան մէջ
գտնուած ազգերը կրնայ սիրել, կրնայ աշխա-
տիլ անոնց մէջ, կարող է բարիք ընել անոնց,
կարող է ծշմարտութիւններ տանիլ անոնց սիրոյ
թեերու վրայ կրած, բայց կ'տարակուսիմք մե-
ծապէս թէ կրնայ Քրիստոնեայ հայրենասիրի

մը տեղը բռնել։ Անձ մը որ իւր Աստուծոյն
համար կրած նախանձին և սիրոյն հետ կ'կրէ
նաև իւր կուրծքին մէջ հայրենեաց և աղդային
նախանձ և ուշը, այսպիսի մէկ անձ մը իրօք զօ-
րաւոր անձ մ'է։ Կրնան բազումք լալ և ջերմ
արտասուրքներ թափել կործանեալ և բարոյա-
պէս տւերեալ ազգի մը վրայ, բայց ո՞հ, մի բաղ-
դատէք զանոնք այն արտասուաց կաթիլներուն
հետ որք հայրենասէր Քրիստոնէի մը ծնօտնե-
րէն վար կ'սահին, կրնան շատերը աղօթել
Աստուծոյ և հառաջնել աւերկութեանց և մե-
ղաց վրայ, բայց ո՞հ այն ջերմ աղերմները և
խորին հառաջնքները որք հայրենեաց նախան-
ձով լի Քրիստոնէի մը սրտին խորերէն կելին՝
աննման են, Երուսաղէմի մրայ լացող Փրկչին
արտասուրքը, որ այնքան անդին և զմայլելի են,
որովհետև Աստուծոյորդւոյ մը մարդկութեան
վրայ թափած արցունքներ են, սակայն մասնա-
ւոր զօրութիւն մը և քաղցրութիւն մը իսկ ու-
նին, որովհետև տնոնք նաև հայրենասիրի մը
արտասուրքներն էին, Քրիստոս ինչպէս որ իւր
մայրը կ'ոՒրեր իբրև որդի, նոյնպէս ալ կ'ոՒրեր
իւր հայրենիքը իբրև քաղաքացի ճշմարիտ, այս-
պիսի հայրենասէր մ'էր նաև Պօղոս Առաքեալ
երը կ'ոՒրեր, «Եղբայրներ՝ իմ սրտիս փափաքը»

և աղօթքը առ Աստուծո անոնց վրկուելուն
համար է», Այսպիսի հայրենասիրական զգաց-
մունքներ էին նաև որ Ճօն Նօքսի Սկավարիոյ
մեծ բարեկարդչին աղաղակել տուին «Ով Տէր
կամ Սկովտեան ինձի տուր կամ թէ ոչ՝ կ'մեռ-
նիմ», Ո՞չ թող մեր երկուն ալ այս բնիկ հա-
ռաջանքները ելլեն, այս բնիկ արցունքները
թափուին և այն ատեն զօրութեաննոր տարերք
մը ուիտի գործածուի ուրիշ զօրութեանց հետ
3. Սակայն համագդի գործակալութիւնը կա-
րեոր է նոյն իսկ համագդի Քրիստոնեայ անհատ-
ներու բարձր և գերազանց բարք մը տալու
համար և այս տեսակ բարուց բարոյական աղգե-
ցութեամբ Աւետարանին գործը մեծապէս յա-
ռաջացունելու համար։ Աստուծո այս օրէնքը
դրեր է թէ բնական և թէ բարոյական աշխար-
հին մէջ որ ամէն կարողութիւնները գործածե-
լով զօրանան։ Հնար չէ որ բարձր Քրիստոնէական
բարք մը ստանամք՝ առանց գործելու։ Քրիստո-
նէութիւնը տեսական կրօնք մը չէ, «Թացէք բո-
լոր աշխարհ Աւետարանը քարողեցէք» լսաւ
իւր հիմնագիրը։ Մեր կեանքը չիրնար բարձ-
րանալ լոկ աղօթքներով, Սուրբ Գիրք կարդալով
և հոգ ևոր քարոզներ մտիկ ընելով. այլ մեր
կեանքը պիտի բարձրանայ՝ երբ ասոնց հետ

ի միասին գործեմք նաև, գործեմք մեր ազդին
ու մեր երկրին մէջ մեր յետին ճգամբը, և ա-
սով միայն պիտի զարդ անանք բոլոր Քրիստո-
նէական կատարելութեանց մէջ: Համազդի գոր-
ծակալութիւնն է որ բնիկ Քրիստոնէից վրայ
տեսակ մը պատասխանատուութիւն կ'դնէ,
կ'կարողացունէ զանոնք արիութեամբ յառաջ
երթալու իրենց պարտաւորութեանց մէջ, բայց
վելցուը այս պատասխանատուութիւնը, և այն
ատեն մարդը տկար և անկարող կ'սեպէ ինք-
ղինք շատ պարագայից տակ փորձով գիտեմք
թէ որքան տարբէր զօրութիւն մը կզդայ մարդ,
երբ խորհի թէ մամսաւոր գործի մը բեռը՝ իր
վրայ կիյնայ և ինք ընելու է, ոչ թէ միայն մեր
կարողութիւնը կ'բազմապատկի, այլ նաև մեր
քաջութիւնը, երբ տան մը կարասիները հրդե-
հէն ազատելու գործը վրադ կառնես, ինչ մեծ
ճիգ, ինչ մեծ ճարպիկութիւն, և ինչ մեծ կա-
րողութիւն ցոյց կուտաս: Երբոր վտանդի մը
ատեն ամենքը քեզի կնային ո՛չչափ աւելի քաջ
ես՝ քան ո՛չչափ երբ դուն ուրիշի մը կնայիս:
Մարդիկ ինչ միջոցներ գտած են և ինչպէս ի-
րենց բոլոր խելքը ի գործ դրած են իրենց վրայ
դրուած պարտքելը կատարելու, որ ատեն բը-
նաւ այնքան ջանք պիտի չընէին եթէ այն

պարտքելը իրենց վրայ չդրուէր: Այսպէս է որ
հայրեր իրենց անկարող և մատղաշ զաւակուն-
քը սնուցանելու համար ոչ թէ միայն իրենց
բոլոր ճգամբը կաշխատին, այլ նաև շատ ան-
դամ արտաքոյ կարդի խելք և հանճար երեան
կ'հանեն, որն բնաւ այնպէս պիտի չընէին եթէ
այն ծանր պատասխանատուութիւնը ուրիշի մը
վրայ դնելու կարող ըլլային: Աստուած այսպէս
մարդոց գործել կուտայ և անոնց կարողու-
թիւնը դուրս կ'հանէ: Պէտք է որ նաև նոյն
կերպով տեղացի Քրիստոնէից կարողութիւննե-
րը ի յայտ գան, փայլին և կատարելութեան հաս-
նին համազդի գործակալութեամբ: Մենք չենք
հաւտար թէ առանց բնիկ գործունէութեան այս
կատարելութիւնները կընան յառաջ գալ: Ասով
Քրիստոնէական բարեսիրութիւնը և առաստա-
ռը տութիւնը իրենց բոլոր փայլունութեամբը
պիտի երեխն, ասով Քրիստոնէական դիւցադ-
նութիւններ և անձնուրացութիւններ ի գործ
պիտի գրուին, ասով պիտի բարձրանան մեր
զգացումները և մեր խորհուրդները, և ասով
աւելի պիտի մօտենամք չնորհաց ամոռին մեր
բոլոր կարօտութիւնները հոգալու: Եւ չէք
կարծեր թէ այս կերպով մենք մեծապէս պիտի
յառաջանամք Քրիստոնէական կենաց մէջ, և

մեր բարոյական ազդեցութիւնը և զօրութիւնը
պիտի աճեցունեմք բոլոր մեր ազգին վրայ:
Մեր ճշմարտութեան համար ունեցած նախան-
ձը, և զանիկա իւր պարզութեամբը ներկայա-
ցնելը միայն՝ բաւական չէ մարդկանց որտե-
րը շարժելու, այլ թող անոնք տեսնեն թէ մենք
ինչ դիւցապնութեամբ կաշխատիմք մեր աղդին
բարիք ընելու և անոր բարոյական ու կրօնա-
կան վիճակը բարձրացունելու և յսցնժամ մեր
զօրութիւնը լման պիտի ըլլայ:

Համսզգի գործակալութեան կարևորութեան
վրայ այս քանի մը համառօտ խորհրդածութիւն-
ները ընելէս յետոյ՝ կուզեմ նաև քանի մը խոր-
հութեներ յառաջ բերել այս տեսակ գործողու-
թիւն մը յառաջ տանելու միջացներուն վրայ:
Ես հոս պիտի խօսիմ յաւետ ներքին՝ քան թէ
արտաքին միջացներուն վրայ:

Եւ նախ՝ պիտի ըսեմ թէ պարտ է մեղ՝ մեր
ժողովրդեան ու մեր մէջ այս զգացումը մշա-
կել, թէ գործը ուղղակի մեղի կ'վերաբերի:
Երբոր այս զգացումը անգամ մը մեր սրտերուն
մէջ զօրանայ, այն ատեն արտաքոյ կարգի աշ-
խոյժութիւն մը և զօրութիւն մը պիտի զգե-
նումք այս մեր գործը գործելու, բովանդակ
աշխարհին օգնութիւնները չեն կընար մեղի այս

զգացման չափ զօրութիւն տալ երբէք չէք տե-
սեր հիւանդ զաւակի մը իւր ծնողքէն խնամ-
ւիլը Երբ տղան վտանգաւոր հիւանդութեան
մէջ է, մայրը և հայրը անձկութեամբ կը լից-
ւին, բարեկամներ ունին անոնք որ թերեւ նոյն-
պէս կ'հոգան, թերեւ ամենաճարտար բժիշկ-
ները իրենց քովն են, բայց ո՞չ ոչ բարեկամաց
համակրութիւնները և ոչ բժշկաց ճարտարու-
թիւնները անոնց անձկութիւնները կարող չեն
վերցունել, Հոն է մայրը՝ և ամենայն խանդա-
ղատանօք իւր որդւոյն վրայ կնայի, անոր ձեռ-
քը կ'բռնէ և իրեն այնպէս կ'թուի թէ իրմէ
զատ ուրիշ հոգացող մը չկայ, ոչ մէկուն կ'վրա-
տահի, թէպէս ոչ մէկուն օգնութիւնը կ'մեր-
ժէ, զաւակը իրն է, Եւ ալ այդ անվասահու-
թիւնը կարհամարհէք դուք, Զեղի չթուիր թէ
նուիրական անվատահութիւն մ'է այդ, որ մօր
մը իրաւունքն է, որովհետև զաւակը իրն է:
Այդ անվատահութիւնը անքաղաքարութիւն
կ'սեպէք, Երբ չկամիր նա վայրկեան մը իւր զա-
ւակը թողուլ վայրկեան մը իր անձկութիւննե-
րը ուրիշին վրայ դնել ու հանգստանալ վայր-
կեան մը անոր գունաթափ դէմքը շտեսնել:
Ոչ թող մայրը իւր մահուան վտանգի մէջ
գտնուող զաւակը հոգայ թող բժիշկները

գան և նային անոր զարկ բազկին և պրտին
բարախումը, բայց թող մայրը և հայրը մաս-
նաւոր անձկութեամբ իրենց ականջը սիրելի
որդւոյ սպտին վրայ դնեն կենաց բարախումը
խմանալու, և անոր կեանքը պահելու համար
թող ամենայն ինչ որ կարող են աղաւութեամբ
ընեն. Հոս մեր սիրելի ազգը մահուան վտան-
գի մէջ անկեալ է, այս ազգը մերն է, թող
զգամք այս և զգամք ճշմարտիւ և զօրու-
թեամբ, մենք իրեւ մերը բռնեմք անոր հի-
ւանդ ձեռքը, ո՞վ որ կամի թող դայ անոր օդ-
նելու. Աշխարհին ճարտար բժիշկները թող
հասնին անոր բժշկութեանը, բայց Ե՞՞ն է այն
և մենք անոր քով կայնիմք, անոր վրայ անձ-
կութեամբ նայիմք և այնպէս զգամք որպէս
թէ մեզմէ զառ ոչ ոք անիկա կ'հոգոյ և կընայ
հոգալ մեզի նման, այս զգացումը մեր մէջ զօ-
րանալով զմեզ պիտի դրդէ շարունակ գործե-
լու և անձկութեամբ ու զգացմամբ գործելու,
չկայ երկրիս վրայ զօրութիւն մը որ այս զգաց-
ման յաղթէ, ինչպէս որ գարնան արևին անոյշ
ճառագայթները կ'հասնին վարդին վրայ և
հօն եղած զօրութիւնը արթննալով կ'սկսի
թերթ առ թերթ բացուիլ և իւր անուշահոտ
բռութուկը սփառել օդին մէջ, և թէպէտ ամե-

նայն ըռութեամբ և հանդարտութեամբ՝ սա-
կային երկրիս վրայ չկայ զօրութիւն մը որ կա-
րող ըլլայ խափանել անոր բացուելու ընթաց-
քը, այսպէս ալ այս զգացումը արևին ճառա-
գոյթներուն նման պիտի ջերմացունէ մեր
զգացմունքը և անդիմադրելի զօրութեամբ
պիտի բանայ բոլոր մեր կարողութիւնները՝
գործելու մեր երկրին և ազգին համար, և
երկրիս վրայ չկայ զօրութիւն մը որ զայն խա-
փանելու կարող ըլլայ :

2. Հարկ է անմիջապէս գործողութեան ըս-
կոել : Քրիստոսի պատուերը անդամալոյծին
«Ելիր ու քալէ» էր: Երբոր նա իր բոլոր ճիշը
ի գործ դնէր անմիջապէս, յայնժամ Աստուա-
ծային զօրութիւնը իրեն պիտի օգներ. և պիտի
բժշկուեր: Եթէ մարդ մը լողալ սորվելու հա-
մար մեզմէ խրառ ուղէ, անմիջապէս ջուրը մը-
տիր և հոն ջանք ըրէ լողալու կ'ըսեմք: Երբոր
տղայ մը ուտումնական ըլլալ կուղէ, հեգարանը
ձեռքը կուտամք, և կըսեմք սորվէ զըմբը: Եւ
այս ամէն պարագայից մէջ ալ անմիջական գոր-
ծողութիւն հարկ է: Քալելու համար քալել
սկսելու է, լողալու համար լողալ սկսելու է, և
սորվելու համար՝ ուսանելու է: Եւ ասոնք մե-
զի անտեղի չեն երևիր: Անոնք բնութեան ձայ-

նըն են, և առանց հնազանդելու մեր կարառակին կարող չեմք հասնիլ, նմանապէս համազգի գործակալութիւնը յառաջ տանելու համար համազգի գործողութիւն սկսելու է, առանց սպասելու. Յիշաւի տկար եմք, անկարող եմք, աղքատ եմք և տգէտ եմք, բայց պէտք է որ գործեմք կարող ըլլալու համար, հարուստ ըլլալու համար և գիտուն ըլլալու համար. Մեր գործողութեանց քանակութեանը վրայ չէ բանը, այլ անոնց տեսակին և յատկութեանը վրայ կ'կայանայ յաջողութիւնը. Մաթիմաթիքական հաշիւներու մէջ տեսակ մը քանակութիւններ կան՝ որպնց Լատիներէն անունը բաժնէբեկնել է, որ անհունապէս փոքր ըսել է: Այս քանակութիւնները զարմանալի յատկութիւններ ունին, երբէք չափի առակ չեն իյնար, և ոչ իրենց արժեքը յայտնի է, բայց և այնպէս իրենց տեսակէն եղող ուրիշ քանակութեանց անհուն փոքր մասունքն են, և կընան այնպիսի կերպիւ գործածուիլ որ միջոց ըլլան երեան հանելու բուն իսկ այն քանակութիւնները՝ որոց որ տեսակով կ'վերաբերին: Եւ այս միջոցաւ է որ ամենէն սքանչելի հաշիւնները կ'կատարուին գիտութեանց և արուեստից մէջ: Ճիշդ այսպէս, բնաւ հոգ շնեմք որ մեր գործողու-

թիւնները յոյժ փոքր և աննշան բաներ են, անոնց տեսակը և հոգին փնտուեմք: Ի՞նչ տեսակ գործողութեանց անհուն փոքր մասունքն են անոնք: Լաւ և շարունակական գործածութեամբ մը վերջապէս պիտի կարողանամք բուն մեծ և բարձր գործողութիւնները երեան հանելու: Բայց նախ՝ պարտ է մեղ յարգել այն փոքր գործողութիւնները որ հիմայ կարող եմք ընելու և պարտ է մեղ անմիջապէս սկսել, և մեղի նպատակ գնել հասնելու շուտով այն վիճակին՝ որուն մէջ մեք մեր երկրին բարեկարգիները պիտի պատճեն ըլլամք:

3. Ամենակարեւոր բան մըն է նաև միութիւնը, մեր ամենամեծ տկարութիւնը ոչ մեր աղքատութիւնն է, ոչ մեր տգիտութիւնը, ոչ մեր սակաւաթիւ լինելը, այլ մեր անմիաբանութիւնը: Միաբանութեամբ համազգի գործակալութիւն կրնանք յառաջ տանիլ և անմիաբանութեամբ է որ միշտ կաւրեմք, պէտք չէ որ ամէնս անջատեալ գլխաւորներ ըլլալ ուղեմք: Մէկ ազդեցութեան մը տակ գալու եմք, փուճ և անոտիպատճառներով անմիաբանութիւն յառաջ չըերեմք: Իրարու գէթ բարյապէս օգնելու ջանամք: Այսքան տկար մարմին մը ըլլալով մենք ոչ յառաջ կրնամք երթալ և ոչ

ալ գործել՝ թէ որ ընդհանուր բաներու մէջ
իրարու ձեռքէ զօրաւոր կերպիւ չըռնեմք և
իրարու օգնական չըլլամք։ Մէր և միութիւն
գրեմք մեր գրօշակին վրայ, և ասոնց դէմ
յանցաւոր եղողը թող ծանր մեղադրանաց տակ
կընայ, ի՞նչ մեծ զօրութիւններ կան մեր դէմ
գործող։ Մոլորութիւն, անհաւատութիւն, Պա-
պականութիւն, աշխարհասկրութիւն և անտար-
բերութիւն ամէն կողմէն մեղ պաշարելու վրայ
են։ Եւ այս վիճակներուն մէջ մեզի կ'վայելէ
որ անմիաբան ըլլամք, իրարու դէմ ելլեմք,
զիրար արհամարհեմք, իրարու նախանձիմք և
անհոգ ըլլամք մեր մեծ պարտականութեանց։
Թող ամենայն ոք սկսի այս բանիո մէջ լաւ օ-
րինակ մը գնել իր եղբարց առջև և թող
տեսնուի պայծառ՝ որ Աւետարանը, Աստուծոյ
սէրը և Հայրենեաց սէրը կրնան զմարդիկ միա-
ցունել և ալ ևս այս նուիրական զգացմունքը
մարդոյ խաղալիք չըլլան։

4. Մեծ անձնուրացութիւն ցոյց տալու պար-
տական եմք, պարագաներ կան որ մարդոցմէ
մեծ և արտաքոյ կարգի անձնուրացութիւն
կ'պահանջն, մեր անձնուրացութեանց վրայ
խորհելու ատենը չէ հիմայ, այլ մեր նպատա-
կին։ Պատերազմին մէջ վերջին ճգամք կուռող

զինուորը երբ իւր արիւնը կ'թափէ հայրենեաց
և ազատութեան համար, հոն այն տեղը չէ՝ որ
խորհի իւր կրած նեղութեանց վրայ, այլ խոր-
հի յաղթութիւնը շահելու։ Մենք ալ յաղ-
թութիւն մը ունիմք շահելու, ազգ մը ունիմք
կենդանացունելու, և պէտք է ամենէն վերջին
ճիգը թափել, երբոր Վէլինկթընի գուքուը
Նաբոլէն Առաջնոյ դէմ կ'պատերազմէր, և
իւր զօրքերը շատ նեղը կյանալով լուր խրկեցին
իրեն թէ թշնամին իրենց վրայ զօրացած է և
իրենք սակաւաթիւ ըլլալով բան մը չեն կըր-
նար ընել, այս կարճ խօսքը խրկեց անոնց
«Կրնաք կայնիլ ձեր տեղը և մեռնիլ», եթէ
ընաւ բան մը չեմք կրնար ընել Աստուծոյ հա-
մար, մարդկութեան համար և սիրելի ազգի մը
համար, կրնամք մեռնիլ անոնց համար։



